# ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

«01» «Մարտ» 2024 թ. № 58-Լ

## «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

3/1/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«01» Մարտ 2024թ.

ք. Երևան

Կազմված է «01» մարտի 2024թ.
Բաղկացած է 15 էջից

Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ 4

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

Հայաստանի Հանրապետության
Շրջակա միջավայրի նախարարի
2024թ. մարտի 01-ի N 8-Լ հրամանի
_____ Հ. Սիմիդյան
«01» մարտի 2024թ.

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿՈՂՄԻՑ 07.06.2005 թ.
գրանցման համար՝ 273.210.04043
ՀՎՀՀ՝ 02512343
23.08.2022 թ. գրանցված կանոնադրության
թիվ 001.2 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
«07» 03 2024թ.
_____

# «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
## (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

Ք. ԵՐԵՎԱՆ
2024թ.

Հավելված

Շրջակա միջավայրի նախարարի

2024 թվականի Մարտի 1 -ի N 58 Լ հրամանի

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
# «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1054-Ն որոշմամբ՝ «Հայանտառ» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման միջոցով և հանդիսանում է նրա իրավահաջորդը:

2. Կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող շրջակա միջավայրի պահպանության ոլորտի անտառատնտեսավարող կազմակերպություն է, որը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքին, սույն կանոնադրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

3. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել, իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

4. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ հիմնադիր):

5. Կազմակերպության կանոնադրությունը դրա հիմնադիր փաստաթուղթն է:

6. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն, ռուսերեն ու անգլերեն անվանումներով կլոր կնիք, դրոշմակնիք, կարող է ունենալ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

7. Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

հայերեն կրճատ՝ «Հայանտառ» ՊՈԱԿ,

ռուսերեն լրիվ՝ Государственная некоммерческая организация “Армлес”,

ռուսերեն կրճատ՝ ГНКО “Армлес”,

անգլերեն լրիվ՝ State Non-Commercial Organization “Armforest”,

անգլերեն կրճատ՝ SNCO “Armforest”:

8. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Ա. Արմենակյան 129:

## 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

9. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը Հայաստանի Հանրապետության պետական անտառային ֆոնդի պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում պետական ծրագրերի իրականացումն է:

10.Կազմակերպության գործառույթներն են.

1) անտառաշինական նախագծերով նախատեսված համալիր միջոցառումների իրականացման միջոցով անտառների կայուն կառավարման ապահովումը.

2) անտառների արտադրողականության բարձրացմանն ուղղված միջացառումների իրականացման ապահովումը.

3) անտառների և անտառային հողերի պաշտպանության, կենսաբազմազանության պաշտպանության և վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման ապահովումը:

11. Այդ նպատակով կազմակերպությունը՝

1) լիազորված պետական մարմնի հանձնարարությամբ մասնակցում է անտառների և անտառային հողերի, բուսական և կենդանական աշխարհի հաշվառման գործընթացներին և նախապատրաստում կադաստրի վարման անհրաժեշտ նյութերը.

2) լիազորված պետական մարմին է ներկայացնում անտառների վիճակի և վերարտադրության վրա ազդող օբյեկտների տեղաբաշխման, նախագծման, շինարարության ու գործարկման պայմանների վերաբերյալ առաջարկություններ.

3) լիազորված պետական մարմին է ներկայացնում անտառները և անտառային հողերն օգտագործման տալու վերաբերյալ առաջարկություններ.

4) տրամադրում է անտառահատման և անտառային տոմսեր.

5) իրականացնում է անտառաշինական աշխատանքներ և/կամ մասնակցում է այդ աշխատանքների կատարմանը.

6) անտառաշինության տվյալների հիման վրա ամփոփում և սահմանված կարգով հաստատման է ներկայացնում բնափայտի մթերման տարեկան չափաքանակները, ինչպես նաև մշակում է բնափայտի մթերման ծավալներում ուղղումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ.

7) իրականացնում է տարեկան հատատեղերի հատկացման աշխատանքներ.

8) ապահովում է անտառավերականգնման, խնամքի, սանիտարական, ինչպես նաև բոլոր տեսակի այլ անտառահատումներից և թափուկից բնափայտի մթերումը.

9) անտառահատման աշխատանքների ավարտից հետո իրականացնում է հատատեղերի տեղազննումը և ապահովում է աշխատանքների ընդունումը.

10) ապահովում է անտառային տնտեսության վարման հետ կապված արտադրական և դրանց օժանդակ օբյեկտների կառուցումը.

11) ապահովում է անտառների վերականգնման և անտառազուրկ տարածքների անտառապատման, ինչպես նաև սելեկցիոն-սերմնային տնտեսության վարման, տնկարանային տնտեսության ընդլայնման, անտառամելիորատիվ միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը.

12) իրականացնում է անտառների արտադրողականության բարձրացման ու անտառային պաշարների արդյունավետ օգտագործման միջոցառումներ.

13) իրականացնում է անտառային ճանապարհների (անտառատնտեսական նշանակության ճանապարհների) բացման, անտառային արտադրանքի պահեստավորման համար հարթակների սարքավորման, ժամանակավոր արտադրական և տնտեսական կառուցվածքների կառուցման, ավտոտրանսպորտի կանգառման տեղերի կազմակերպման աշխատանքներ.

14) իրականացնում է անտառների և անտառային հողերի պաշտպանության, ինչպես նաև անտառների սանիտարական վիճակի՝ վնասատուների ու հիվանդությունների զանգվածային բազմացումների կանխման և դրանց դեմ պայքարի, հատման մնացորդներից հատատեղերի մաքրման, անտառօգտագործման հետևանքով անտառների և անտառային հողերի խախտված հատվածների օգտագործման համար պիտանի վիճակի բերման միջոցառումներ և/կամ աշխատանքներ.

15) ապահովում է բնածին ազդեցությունների հետևանքով անտառների և անտառային հողերի վիճակի փոփոխությունների բացահայտումն ու կանխարգելումը.

16) մասնակցում է բնագավառին վերաբերող հանրապետական, տարածաշրջանային գիտահետազոտական և գիտափորձարարական ծրագրերի մշակմանը և այդ աշխատանքների իրականացմանը.

17) իր իրավասության սահմաններում ապահովում է ներդրումային ծրագրերով սահմանված գործառույթների իրականացումը.

18) մասնակցում է անտառային մոնիթորինգի և տեղեկատվության միջազգային ու տարածաշրջանային համատեղ ծրագրերի իրականացմանը.

19) կազմակերպում է գիտաճանաչողական զբոսաշրջություն, էկոզբոսաշրջություն.

20) անտառներում և անտառային հողերում համակարգում է ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից անտառային օրենսդրությամբ, ինչպես նաև պայմանագրերով սահմանված պարտավորությունների պատշաճ կատարումը.

21) իր իրավասության սահմաններում իրականացնում է բնակչության էկոլոգիական կրթության ու դաստիարակության միջոցառումներ, անտառային տնտեսության ոլորտի կադրերի պատրաստման և վերապատրաստման աշխատանքներ.

22) իր իրավասության սահմաններում համագործակցում է անտառային ոլորտի միջազգային կազմակերպությունների հետ, մասնակցում անտառային ոլորտի միջազգային ծրագրերին.

23) մշակում և հրապարակում է անտառային ոլորտի գիտական և գիտաճանաչողական գրականություն և տեղեկատվական նյութեր.

24) իրականացնում է Կազմակերպության պաշտոնական ինտերնետային կայքի վարումը և լիազոր մարմնին տրամադրում է անհրաժեշտ նյութեր և տեղեկատվություն.

25) հիմնադրի կողմից անհատույց օգտագործման իրավունքով իրեն ամրացված անտառներում իրականացնում է անտառապաթոլոգիական ուսումնասիրություններ՝ անտառների սանիտարական վիճակի վերաբերյալ անհրաժեշտ տվյալներ ստանալու նպատակով.

26) ապահովում է հիմնադրի կողմից իրեն ամրացված անտառային հողերի և հատուկ պահպանվող տարածքների պաշտպանությունը, վերականգնումը, անտառապատումը և արդյունավետ օգտագործումը՝ պահպանելով անտառների կենսաբազմազանության ինքնավերականգնման կարողությունը, ինչպես նաև ապահովելով անտառների բնապահպանական, սոցիալական, տնտեսական ներուժի արդյունավետ օգտագործումը և կառավարումը.

27) արտահանվող և ձեռք բերված փայտանյութի կամ դրանից պատրաստված ապրանքների համապատասխանության մասին եզրակացության տրամադրումը.

28) անտառավերականգնմանը, անտառապատմանը և խնամքին ուղղված նպատակային ծրագրերի մշակմանը մասնակցությունը և իրականացման կազմակերպումը.

29) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

12. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) բնափայտի մթերում, վերամշակում և իրացում.

2) տնկանյութի (տնկիներ, սերմնաբույսեր) աճեցում և իրացում.

3) երկրորդական անտառանյութի (կոճղերի) մթերում, վերամշակում և իրացում.

4) կողմնակի անտառօգտագործում (խոտհունձ, գյուղատնտեսական կենդանիների արածեցում, փեթակների և մեղվանոցների տեղադրում, վայրի պտղի, ընկույզի, սնկի, հատապտղի, դեղաբույսերի ու տեխնիկական հումքի հավաքում) և դրա արդյունքում մթերված կենսապաշարների վերամշակում ու իրացում.

5) գյուղատնտեսական հողատեսքերում գյուղատնտեսական մթերքի արտադրություն, վերամշակում և իրացում.

6) հանգստի և զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցում.

7)պետական ֆինանսավորման, սեփական միջոցների և մասնավոր ընկերությունների հաշվին իրականացնում է անտառների վերականգնում և անտառապատում.

8) խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում:

## 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԱԶՄԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13. Կազմակերպության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) և գործադիր մարմինը՝ տնօրենը:

14. Կազմակերպության հիմնադիրն ունի նրա գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

15. Հիմնադրի լիազորությունները սահմանվում են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքով:

16. Լիազորված պետական մարմնի լիազորություններն են՝

1) կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը.
2) օրենքով սահմանված կարգով կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի կամ ներկայացուցչությունների ստեղծումը.
3) կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.
4) կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և դրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
5) կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը.
6) կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանների, հրահանգների, կարգադրությունների ու ցուցումների կասեցումը կամ դրանք ուժը կորցրած ճանաչելը.
7) խորհրդի կողմից հավանության արժանացած կազմակերպության հաստիքային ցուցակի և տարեկան ծախսերի նախահաշվի հաստատումը.

8) կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները լսելը և դրա գործունեության վերստուգման արդյունքները քննարկելը.

9) կազմակերպությանն ամրացված՝ պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողության իրականացումը.

10) կազմակերպության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

11) կազմակերպությանն ամրացված գույքի վարձակալության հանձնման վերաբերյալ համաձայնություն տալը.

12) «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթների իրականացումը:

17. Խորհուրդը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, կառավարում է կազմակերպության գործունեությունը: Խորհուրդը կազմված է յոթ անդամից՝ նախագահ ու վեց անդամ, և քարտուղարից: Պետական կազմակերպության խորհրդի անդամ կարող են լինել միայն ֆիզիկական անձինք: Խորհրդի անդամների ոչ պակաս, քան քսան տոկոսը պետք է կազմեն պետական կազմակերպության աշխատավորական կոլեկտիվի անդամները, որոնց ընտրում են աշխատավորական կոլեկտիվի ընդհանուր ժողովը: Խորհրդի անդամներին նշանակում և անհատական կազմը հաստատում է լիազորված պետական մարմնի ղեկավարը: Խորհրդի քարտուղարը տնօրենի ներկայացմամբ հաստատվում է խորհրդի նախագահի կողմից՝ կազմակերպության աշխատակիցներից:

18.Խորհրդի լիազորություններն են՝

1) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված՝ կազմակերպության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ լիազորված պետական մարմին առաջարկություններ ներկայացնելը.

2) կազմակերպության գործադիր մարմնի նկատմամբ վերահսկողության իրականացումը.

3) գործադիր մարմնի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ պետական լիազորված մարմնին առաջարկություն ներկայացնելը.

4) հիմնադրի կողմից սահմանված կարգով կազմակերպության շահույթի տնօրինման ուղղությունների սահմանումը.

5) կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

6) իր աշխատակարգի հաստատումը.

7) սահմանված կարգով լիազորված պետական մարմին կազմակերպության հաստիքային ցուցակի և տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

8) պետական կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

9) կազմակերպության գործադիր մարմնի հաշվետվությունների քննարկումը.

10) կազմակերպության տարեկան հաշվետվությունների և տարեկան հաշվեկշռի քննարկումը.

11) «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման համար համաձայնություն տալը.

12) խորհրդի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը.

13) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

19.Խորհրդի անդամներն իրենց լիազորությունների շրջանակներում իրավունք ունեն՝

1) տնօրենից պահանջելու խորհրդի նիստի օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ տվյալներ, հաշվետվություններ, փաստաթղթեր, տեղեկություններ.

2) հարց բարձրացնելու խորհրդում՝ տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին, Հայաստանի Հանրապետության օրենսդրության, սույն կանոնադրության, լիազորված պետական մարմնի, խորհրդի ու տնօրենի կողմից սահմանված կարգերի, կանոնների և այլ պարտադիր նորմերի պահանջների կոպիտ խախտումների դեպքում,

3) իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող, խորհրդի իրավասությանն առնչվող կամ խորհրդի կողմից սահմանված վերահսկողական կամ այլ գործառույթներ:

20.Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են լիազորված պետական մարմնի ղեկավարի կողմից ընդունված իրավական ակտով՝

1) առաջադրողի նախաձեռնությամբ.

2) խորհրդի առաջարկությամբ.

3) անձնական դիմումով.

4) խորհրդի նիստերին անընդմեջ երեք անգամ անհարգելի չմասնակցելու դեպքում.

5) կազմակերպության ներկայացուցչի դեպքում՝ կազմակերպության ընդհանուր ժողովի որոշմամբ:

21.Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման դեպքում մինչև առաջիկա հերթական նիստը նշանակվում է նոր անդամ:

22.Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է խորհրդի աշխատանքները.

2) նախագահում է խորհրդի նիստերը.

3) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը և վավերացումը.

4) խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակաշրջանում ապահովում է կազմակերպության գործադիր մարմնի և խորհրդի անդամների միջև կապը.

5) որոշում է խորհրդի նիստերի անցկացման կարգը կամ ձևը:

23.Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ՝ խորհրդի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև լիազորված պետական մարմնի, գործադիր մարմնի կամ խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով: Խորհրդի նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և կարգով:

24.Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին:

25.Խորհրդի նիստերը վարում է խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում, խորհրդի որոշմամբ, նրա պարտականությունները կատարում է խորհրդի անդամներից մեկը:

26.Խորհրդի որոշումը համարվում է ընդունված, եթե այդ որոշմանը կողմ են քվեարկել խորհրդի նիստին ներկա անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք և քվեարկում է կողմ կամ դեմ: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի, իսկ նրա բացակայության դեպքում նիստը նախագահողի ձայնը վճռորոշ է:

27.Խորհրդի, այդ թվում՝ հարցման կարգով կամ հեռավար կազմակերպված նիստերն արձանագրվում են խորհրդի քարտուղարի կողմից: Խորհրդի նիստի արձանագրության պատճենը խորհրդի քարտուղարը ներկայացնում է լիազոր մարմին:

28.Անհրաժեշտության դեպքում՝ խորհրդի նիստերը կարող են կազմակերպվել հարցման կարգով՝ գրավոր փաստաթղթերի կամ դրանց էլեկտրոնային տարբերակների փոխանցմամբ, կամ հեռավար՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ: Եթե խորհրդի արձանագրության նախագիծը խորհրդի անդամին պատշաճ ուղարկվելուց կամ փոխանցվելուց հետո եռօրյա ժամկետում խորհրդի անդամի կողմից պատասխան չի տրվում, ապա համարվում է, որ խորհրդի անդամը կողմ է արձանագրության նախագծին:

29.Խորհրդի նիստերին, խորհրդի համաձայնությամբ, կարող են մասնակցել հրավիրված այլ անձիք:

30.Տնօրենն իրավունք չունի հանդես գալ որպես կազմակերպության խորհրդի անդամ, սակայն կարող է մասնակցել խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

31.Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը:

32.Կազմակերպության տնօրենն օրենքով, հիմնադրի ու լիազորված մարմնի, ինչպես նաև խորհրդի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի խորհրդի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

33.Կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակվում է մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված թեկնածուն կամ թեկնածուներից մեկը ՝ լիազորված պետական մարմնի ղեկավարի կողմից:

34.Տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը: Պայմանագրում սահմանվում են նրա իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի, կազմակերպության կառավարման այլ մարմինների հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարեցման՝ օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը կգտնեն անհրաժեշտ: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության

աշխատանքային օրենսդրության պահանջներին՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

35.Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

36.Տնօրենը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառած վնասի համար: Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար: Տնօրենի լիազորությունները դադարեցնող անձը պարտավոր է օրենքով սահմանված կարգով լուծել նաև նրա կողմից կազմակերպությանը կամ պետությանը պատճառած վնասի փոխհատուցման հարցը: Սույն պահանջը չկատարելու հետևանքով կազմակերպությանը կամ պետությանը պատճառված վնասի համար կազմակերպության տնօրենի լիազորությունները դադարեցրած պաշտոնատար անձը կրում է գույքային պատասխանատվություն:

37.Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի, լիազորված պետական մարմնի խորհրդի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

38. Տնօրենի բացակայության դեպքում, լիազորված պետական մարմնի ղեկավարի գրավոր որոշման համաձայն այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

39. Տնօրենի լիազորությունները դադարեցվում են օրենքով սահմանված դեպքերում:

40. Տնօրենի տեղակալը և մասնաճյուղի ղեկավարը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է կազմակերպության տնօրենի կողմից:

41. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում դրա շահերը և կնքում գործարքներ.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի ու լիազորված պետական մարմնի որոշումներով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) հաստատում է կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների և վաճառվող ապրանքների գները.

4) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր.

6) ֆինանսների նախարարության գործառնական վարչությունում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) կատարում է աշխատանքի բաշխում իր և տեղակալի միջև.

8) սահմանում է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

9) օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

10) ապահովում է կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում լիազորված պետական մարմին.

11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ.

12) հաստատում է հիմնարկների կամ մասնաճյուղերի կանոնադրությունները:

## 4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

42.Հիմնադիրը կարող է կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

43.Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ կազմակերպության կանոնադրությամբ: Կազմակերպությանն ամրացված գույքը վարձակալության է հանձնվում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ամբողջությամբ ուղղվում են պետական բյուջե:

44.Վարձակալության չհանձնված ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են, եթե այլ բան նախատեսված չէ կազմակերպության կանոնադրությամբ:

45.Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

46.Կազմակերպությունն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով օգտագործում (տիրապետում) է իրեն ամրացված գույքը:

47.Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված տրանսֆերտներից և կազմակերպության կողմից ձեռնարկատիրական գործունեությունից, միջոցառումների իրականացման ու տարբեր ծառայությունների մատուցման դիմաց վճարումներից, հովանավորչական, նվիրատվական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ մուտքերից:

48.Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է կազմակերպության կանոնադրական նպատակներին համապատասխան:

49. Անտառների կամ անտառային հողերի վարձակալության պայմանագիրը կնքվում է մինչև 60 տարի ժամկետով: Անտառային հողերի գյուղատնտեսական նպատակների համար նախատեսված հողատեսքերի վարձակալության պայմանագիրը կնքվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված ժամկետներով:

50. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության արժույթով գանձապետական հաշվարկային հաշիվ, ինչպես նաև կարող է ունենալ արտարժույթով գանձապետական հաշվարկային հաշիվներ:

## 5. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

51.Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը և խորհուրդը:

52.Կազմակերպությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով հրապարակում է իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

## 6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

53 Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել հիմնադրի որոշմամբ և (կամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ու կարգով:

54.Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: